# ՄԵԾԱՐՈՒՄ

Երեկ Թեքեյան կենտրոնում տեղի ունեցավ մեծարման երեկույթ՝ նվիրված ԳԱԱ նախագահի, ակադեմիկոս Ֆադեյ Սարգսյանի 80-ամյակին: Հանդիսությունը բացվեց Շահե արքեպիսկոպոս Աճեմյանի աղոթքով, ապա հոբելյարին հանձնվեց ադամանդակուռ «Արարատ» շքանշանը: Ցեղասպանության թանգարան-ինստիտուտի տնօրեն Լավրենտի Բարսեղյանը մանրամասնորեն անդրադարձավ Տաճատիչի կենսագրությանը, որը *«մանկության դառը տարիներից երազել է պայծառ ապագայի մասին ու հասել դրան անխոնջ աշխատասիրությամբ»*: Անմիջական էր Հայաստանում ՌԴ դեսպան Անատոլի Դրյուկովի խոսքը: Վերջինս Ֆ. Սարգսյանին հանձնեց «Հայաստանի ու Ռուսաստանի գիտությունների կապող օղակը»:

Ա. ՔԵՇԻՇՅԱՆ